



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 130-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն, ղեկավարվելով ավագանու կանոնակարգի 71-րդ կետի դրույթով, **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

- Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Վեղի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգը.
 - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 - ՍՈՒՐԻԿ ՅՈՒՐԴԱՔԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-031-0032-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-031-0032-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-004-0073-0226 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-004-0303-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՎԵՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-096-0222-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐՅԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-095-0044-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՐ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 212-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ















1.11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵԼՔՈՆ ՏԱԼՈՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 115-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14	Դեմ -9	Ձեռնպահ -0
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ 	ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՂԻԿ 	
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ 	ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ 	
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ 	ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ 	
ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ 	ՀՈՒԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ 	
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵԼ 	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ 	
ՀԱԿՈՒԲՅԱՆ ՆՇԱՆ 	ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍ 	
ՀԱԿՈՒԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ 	ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ 	

ՀՈՎԱՏՓՅԱՆ ԱԶԻՉ *Handwritten signature*

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ *Handwritten signature*

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ *Handwritten signature*

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ *Handwritten signature*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ *Handwritten signature*

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ *Handwritten signature*

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ *Handwritten signature*

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ *Handwritten signature*

ՍԵՂՈՒԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ *Handwritten signature*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 131-Ա

ՍՈՒՐԻԿ ՅՈՒՐԴԱԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները և Վեղի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու մասին» N 12-Ա որոշումը և հաշվի առնելով Վեղի համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Վեղի քաղաքային բնակավայրի՝ Հր. Ներսիսյան փողոցի 25 տան բնակիչ Սուրիկ Յուրդաբեկի Սարգսյանին (ծնված՝ 01.01.1959թ., անձնագիր՝ AS 0237480, տրված՝ 20.06.2018թ., 025-ի կողմից/ սեփականության իրավունքով պատկանող, 03-004-0089-0124 կադաստրային ծածկագիրը կրող, 0.0052 հա հասարակական կառուցապատման հողի նկատմամբ տրամադրել 3461 /երեք հազար չորս հարյուր վաթսունմեկ/ ՀՀ դրամ գումարի չափով հարկային արտոնություն:
2. Ս. Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, HYUNDAI TUCSON 2.0 մակնիշի 71NN999 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի գծով՝ 32250 /երեսուններկու հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ գումարի չափով հարկային արտոնություն:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷՂԻԿ

[Handwritten signature]

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

[Handwritten signature]

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

[Handwritten signature]

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

[Handwritten signature]

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

[Handwritten signature]

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

[Handwritten signature]

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ

[Handwritten signature]

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ

[Handwritten signature]

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

[Handwritten signature]

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

[Handwritten signature]

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

[Handwritten signature]

ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ

[Handwritten signature]

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

[Handwritten signature]

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱԿՐԱՄ

[Handwritten signature]

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

[Handwritten signature]

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

[Handwritten signature]

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

[Handwritten signature]

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

[Handwritten signature]

ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ

[Handwritten signature]

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10
ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-031-0032-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Լյուբով Վիկտորի Առաքելյանի դիմումը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գոռավան բնակավայրի Գ. Նարեկացու փողոց 48 հողամաս հասցեում գտնվող, 03-031-0032-0006 կադաստրային ծածկագիրը կրող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1148 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները պարզեցված կարգով փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23


Դեմ -0


Ձեռնպահ -0


ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ


ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ


ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ


ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ 


ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ 


ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ 


ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ 


ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ 

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ 


ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ 


ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ 


ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ 


ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻՋ 


ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ 


ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ 


ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ 

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ 


ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ 

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ 

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ 

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ 

ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ 

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 133-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՌԱՎԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-031-0032-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Օրբել Հայրամի Առաքելյանի ներկայացուցիչ Մարտիկ Հայրամի Առաքելյանի դիմումը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գորավան բնակավայրի 03-031-0032-0007 կադաստրային ծածկագիրը կրող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.104 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները պարզեցված կարգով փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷՂԻԿ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ *[Signature]*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ *[Signature]*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *[Signature]*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ *[Signature]*

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *[Signature]*

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ *[Signature]*

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*

ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ *[Signature]*

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ *[Signature]*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ *[Signature]*

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ *[Signature]*

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ *[Signature]*

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ *[Signature]*

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ *[Signature]*

ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ *[Signature]*

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՂԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-004-0073-0226 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածներով, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 30.07.2021թ-ի Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 23.05.2023թ-ի թիվ 01/11.1/5941-2023 գրությունը և հաշվի առնելով քաղաքացի Անդրեաս Պարզևի Սարգսյանի դիմումը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Վեղի քաղաքային բնակավայրի Արարատյան փողոց 59/15 հողամաս հասցեում գտնվող, 03-004-0073-0226 կադաստրային ծածկագիրը կրող, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0.0019 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել և դասել հասարակական կառուցապատման հողերի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -0

Դեմ -23

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ *[Signature]*
 ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ *[Signature]*
 ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*
 ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *[Signature]*
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*
 ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ *[Signature]*
 ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *[Signature]*
 ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ *[Signature]*
 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*
 ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ *[Signature]*
 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*
 ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ *[Signature]*
 ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱԿՐԱՄ *[Signature]*
 ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈԿԱՐ *[Signature]*
 ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ *[Signature]*
 ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*
 ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ *[Signature]*
 ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ *[Signature]*
 ՍԵԴՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ *[Signature]*
 ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 135-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՂԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-004-0303-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածներով, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 30.07.2021թ-ի Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ Վարչապետի 2009թ-ի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 31 մայիսի 2023 թվականի թիվ 2/փ-146 եզրակացությունը և հաշվի առնելով քաղաքացի Արարատ Խաչիկի Խաչատրյանի դիմումը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**


1. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Վեղի քաղաքային բնակավայրի 03-004-0303-0005 կադաստրային ծածկագիրը կրող, 0.12167 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել և դասել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:
2. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Վեղի քաղաքային բնակավայրի 03-004-0303-0005 կադաստրային ծածկագիրը կրող, 0.12167 հա մակերեսով հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը կազմում է 2 237 148 / երկու միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար մեկ հարյուր քառասունութ / դրամ, որը ենթակա է վճարման Վեղի համայնքի 900425102143 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21

Դեմ -0

Ձեռնպահ -1

ԱՐԲԱԿԱՄՅԱՆ ԷԴԻԿ



ՀՈՎԱԵՓՅԱՆ ԱԶԻԶ



ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ




ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ



ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ



ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ



ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ



ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ




ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ



ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ




ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՂԱՐ



ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ



ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ




ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ



ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԿԱԳՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 136-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՎԵՂԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-096-0222-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածներով, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 30.07.2021թ-ի Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ Վարչապետի 2009թ-ի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 19 հուլիսի 2023 թվականի թիվ 2/փ-205 եզրակացությունը և հաշվի առնելով քաղաքացի Հրաչյա Վաչիկի Ղազարյանի դիմումը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է**

1. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Փոքր Վեղի բնակավայրի 03-096-0222-0026 կադաստրային ծածկագիրը կրող, 0.4293 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել և դասել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:
2. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Փոքր Վեղի բնակավայրի 03-096-0222-0026 կադաստրային ծածկագիրը կրող, 0.4293 հա մակերեսով հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը կազմում է 4 375 628 /չորս միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր քսանութ/ դրամ, որը ենթակա է վճարման Վեղի համայնքի 900425102143 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ *[Signature]*

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ *[Signature]*

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ *[Signature]*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ *[Signature]*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *[Signature]*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ *[Signature]*

ՀԱԿՈՒԲՅԱՆ ՆՇԱՆ *[Signature]*

ՀԱԿՈՒԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ *[Signature]*

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*

ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻՁ *[Signature]*

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ *[Signature]*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ *[Signature]*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ *[Signature]*

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ *[Signature]*

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ *[Signature]*

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ *[Signature]*

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ *[Signature]*

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԵՂՈՒԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ *[Signature]*

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք. Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 137-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐՑԱԶՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 03-095-0044-0002 ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով և հաշվի առնելով Վեղի համայնքի ղեկավարի առաջարկությունը, և այն, որ Ուրցաձոր բնակավայրի կադաստրային քարտեզագրման ժամանակ բնակավայրի վարչական սահմանում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 4-րդ փողոց 8/1 հողամաս հասցեում գտնվող 03-095-0044-0002 կադաստրային ծածկագիրը կրող 0.14057 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը սխալմամբ հաշվառվել է, որպես քաղաքացու սեփականություն և Հայաստանի Հանրապետության կառավարության 04.08.2005 թվականի թիվ 1408-Ն որոշմամբ չի փոխանցվել Ուրցաձոր համայնքին որպես սեփականություն, անհրաժեշտ է Վեղի համայնքի Ուրցաձոր բնակավայրի կադաստրային քարտեզում 03-004-0094-0009 կադաստրային ծածկագիրը կրող հողամասի սահմանները ճշգրտել որակավորում ունեցող չափագրողի կողմից կազմված հողամասի հատակագծի համաձայն և հողամասի նկատմամբ ճանաչել Վեղի համայնքի սեփականությունը՝ **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Վեղի համայնքի ղեկավարին սահմանված կարգով Վեղի համայնքի Ուրցաձոր բնակավայրի կադաստրային քարտեզում 03-095-0044-0002 կադաստրային ծածկագիրը կրող, 4-րդ փողոց 8/1 հողամաս հասցեում գտնվող, 0.14057 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել Վեղի համայնքի սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարկման հաջորդող օրվանից:

Կողմ -23

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ



ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ




ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ



ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ



ՀԱԿՈՐՅԱՆ ՆՇԱՆ



ՀԱԿՈՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ



ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ




ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ



ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻՋ




ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ



ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ




ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ




ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ



ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ



ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ



ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ



ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԵՂՈՒԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
 ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 138-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ.-ի թիվ 286-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վեղի համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

- Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի ղեկավարին՝ աճուրդային կարգով օտարել Վեղի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -9

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍ

ՀԱԿՈՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԵՂՈՎԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 10
ք. Վերի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
 ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com








Ո Ր Ո Շ ՈՒ Մ










10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 139-Ն






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 212-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկն ու աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի զեկույցը, **Վեղի համայնքի ավագանին որոշում է՝**

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 212-Ն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14	Դեմ -0	Ձեռնպահ -9
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ 		ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ 
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻԱ 		ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ 		ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ 
ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ 		ՀՈՒԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ 


ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ 
ՀԱԿՈՐՅԱՆ ՆՇԱՆ 
ՀԱԿՈՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ 
ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ 
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ 
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ 
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ 
ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ 
ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ
ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ 

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ 
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ 
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՈՒԿԱՐ 
ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ 
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԿԱԳՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10
ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 140-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի, 10-րդ հոդվածի 4-րդ մասի և 19-րդ հոդվածի 4-րդ մասի, **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքում /այսուհետ՝ նաև Համայնք/ աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Համայնքի աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար Համայնքի ղեկավարի կողմից թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:
4. Հաստատել Համայնքում՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի հետ կնքվող Պայմանագրերի ձևերը՝ համաձայն NN 4 և 5 հավելվածների:
5. Հաստատել Համայնքի ղեկավարի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության N 1 ձևը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

[Handwritten signature]

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

[Handwritten signature]

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

[Handwritten signature]

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

[Handwritten signature]

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

[Handwritten signature]

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ

[Handwritten signature]

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

[Handwritten signature]

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

[Handwritten signature]

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

[Handwritten signature]

ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻՋ

[Handwritten signature]

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍ

[Handwritten signature]

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

[Handwritten signature]

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

[Handwritten signature]

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

[Handwritten signature]

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

[Handwritten signature]

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

[Handwritten signature]

ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ

[Handwritten signature]

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 141-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԻՄ ՀՋՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵԼՔՈՆ ՏԱԼՈՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Վեղի համայնքի ավագանու 29.07.2022թ-ի N 80-Ա որոշմամբ հաստատված «Վեղի համայնքի ավագանու կանոնակարգի» 119-120-րդ, 122-123-րդ կետերով, հաշվի առնելով այն փաստը, որ Վեղի համայնքի ավագանու կողմից գումարված 2023 թվականի առաջին նստաշրջանի հերթական և արտահերթ նիստերից և քվերակություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 30.06.2023թ-ի գրությամբ ներկայացված ժամկետում Մ.Տալոյանի կողմից չի ներկայացվել «Վեղի համայնքի ավագանու կանոնակարգի» 120-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ավելին, Վեղի համայնքի ավագանու հերթական նիստերից բացակայելու պատճառների մասին Մ.Տալոյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված հերթական նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում, ինչպես նաև «Էջմիածնի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 11.09.2023թ-ին տրված տեղեկանքը, **Վեղի համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի ավագանու կողմից 2023 թվականին գումարած հերթական նստաշրջանի ընթացքում 2023թ-ի փետրվարի 14-ի, մարտի 10-ի, ապրիլի 5-ի, մայիսի 2-ի, մայիսի 19-ի, հունիսի 2-ի ավագանու հերթական և արտահերթ նիստերից ու քվերակություններից Վեղի համայնքի ավագանու «Իմ հզոր համայնք» խմբակցության անդամ Մելքոն Տալոյանի բացակայությունները համարել անհարգելի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ *[Signature]*

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ԷՂԻԿ *[Signature]*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ *[Signature]*

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ *[Signature]*

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *[Signature]*

ՀՈՌԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ *[Signature]*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՍԵՆ *[Signature]*

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ *[Signature]*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍ *[Signature]*

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *[Signature]*

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ *[Signature]*

ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ *[Signature]*

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ *[Signature]*

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ *[Signature]*

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ *[Signature]*

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ *[Signature]*

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ *[Signature]*

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՍԵՆ *[Signature]*

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 142-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 115-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու համաձայնություն տալու մասին» N 115-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) Որոշումը լրացնել հետևյալ նոր 1.1 ենթակետով՝

«1.1. Սահմանել, որ արտաբյուջետային հաշիվը բացվում և տնօրինվում է բացառապես Վեղի համայնքի ղեկավարի կողմից նշանակված պաշտոնատար անձի և «Արտաքսատա» փակ բաժնետիրական ընկերության աշխատակցի հետ համատեղ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -9

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *Pereced*
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*
 ՀԱԿՈՐՅԱՆ ՆՇԱՆ *[Signature]*
 ՀԱԿՈՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *[Signature]*
 ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱԶԻՋ *[Signature]*
 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*
 ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ *[Signature]*
 ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ *[Signature]*
 ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*
 ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ *[Signature]*
 ՍԵԴՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ *[Signature]*

ՀՈՒՒԿՅԱՆ ՆԱՐԵԿ *N. 76*
 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ *[Signature]*
 ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍ *[Signature]*
 ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ *[Signature]*
 ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ *[Signature]*
 ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
 2023թ. հոկտեմբերի 10
 ք. Վեդի



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնք
 ք.Վեղի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 143-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, **Վեղի համայնքի ավագանին որոշում է.**

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեղի համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշել 2023 թվականի նոյեմբերի 8-ին ժամը 11:00-ին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -9

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

ԹՈՒՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀՈՒԻԿՅԱՆ ՆԱՐԵԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՇԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈԿԱՐ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԶԻԶ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՆՐԱՄ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՄԻՐՁՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԵՂՐԱԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 10

ք. Վեդի

ՑԱՆԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ**

Ը/Ը	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի մակերեսը (հա)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	հողամասի 1 քմ-ի կադաստրային արժեքը (դրամ)	Հողամասի օտարման մեկնարկային գինը (հազ. դրամ)	Հողամասի օտարման ժամկետը	Հողամասի վճարման նպատակը	Ծանուցում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

1	Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Մ. Խաչատրյան փողոց 50/7 հողամաս	03-004- 0073-0233	0.01593	Բնակավայ րերի	Բնակելի կառուցապ ատման	1877.7	450 000	1 տարի	Բնակելի շինություն կառուցելու նպատակով	
2	Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Շ. Ազնավուրի փողոց 1/1 հողամաս	03-004- 0325-0093	0.03898	Բնակավայ րերի	Բնակելի կառուցապ ատման	1877.7	1 000 000	1 տարի	Բնակելի շինություն կառուցելու նպատակով	
3	Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան փողոց 57/2	03-004- 0073-0231	0.0012	Բնակավայ րերի	Խառը կառուցապ ատման	1877.7	100 000	1 տարի	Շինություն կառուցելու նպատակով	
4	Վեդի համայնքի Նոր Ուղի բնակավայրի Գ. Նժդեհի փողոց 33/1 հողամաս	03-073- 0006-0021	0.07882	Բնակավայ րերի	Բնակելի կառուցապ ատման	792	800 000	1 տարի	Բնակելի տուն կառուցելու նպատակով	

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգը նպատակ ունի կարգավորել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի (այսուհետ՝ Համայնք) տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքի տարածքում աղբահանությունն ու սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներ են, որոնք իր միջոցներով իրականացնում է «**Վեդի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում**» ՀՈԱԿ-ը կամ «**Գնումների մասին**» ՀՀ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա ծառայություն մատուցող կազմակերպությունը, օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ, որպես սկզբունք ընդունելով՝
 - 1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.
 - 2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.
 - 3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.
 - 4) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, օգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծումը և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցումը.
 - 5) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը.
 - 6) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը:
3. Սույն կարգի իմաստով «**աղբ**» հասկացությունն իր մեջ ընդգրկում է կոշտ կենցաղային թափոններ, ներառյալ՝ թափոնները, որոնք գոյանում են Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման հետևանքով:
4. Կազմակերպությունը Համայնքի տարածքում գտնվող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի կամ շինությունների սեփականատերեր կամ վարձակալ հանդիսացող կամ այլ օրինական հիմքով այն տիրապետողներին՝ նրանց հետ կնքված պայմանագրերի համաձայն, մատուցում է աղբի հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և/կամ թաղման ծառայություններ:
5. Կազմակերպությունն իրականացնում է Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրումը, որն իր մեջ ընդգրկում է փողոցների, հրապարակների, պուրակների, բակերի, մայթերի, անցումների, գետնանցումների, հուշարձանների, սիզամարգերի մաքրումն աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, փողոցների, մայթերի և անցումների ձյունից և սառույցից մաքրումը, ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը՝ ամենօրյա հաճախականությամբ:
6. Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է հատուկ աղբատար և հարմարեցված (որոնք շահագործվում են սահմանված կարգով աղբահանության կազմակերպման նպատակների համար) մեքենաների՝ աղբատար փոխադրամիջոցների միջոցով,

որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված նորմերին:

7. Կազմակերպությունն աղբը տեղափոխում է աղբավայրեր, հատուկ հատկացված տեղեր, որոնք գտնվում են Համայնքի հսկողության ներքո:

8. Աղբանոթները, աղբարկղերը, աղբամանները, աղբի հավաքման կոնտեյներները (այսուհետ՝ աղբամաններ) տեղադրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան նախատեսված վայրերում, այնպես, որ Կազմակերպությունը հնարավորություն ունենա պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը: Աղբամանները սովորաբար տեղադրվում են նույն վայրերում, սակայն այդ վայրերը չպետք է սահմանափակված լինեն միայն բնակելի շենքերի, կազմակերպությունների, զբոսայգիների ու պուրակների, հասարակական վայրերի հարակից տարածքներով:

9. Աղբի, թափոնների կուտակման և հավաքման համար նախատեսված աղբամանները պետք է՝
1) պատրաստված լինեն դիմացկուն մետաղից, ծանր պլաստիկից, սեղմված/խտացված մանրաթելային (ֆիբր) կոնստրուկցիայից կամ այլ նյութից՝ նշագծումով, թե ինչ տեսակի և որքան աղբ կարելի է լցնել աղբամանի մեջ.

2) ունենան Համայնքի կողմից սահմանված հատուկ արտաքին տեսք (կափարիչ, փական, բռնակներ, անիվ) պատշաճ բեռնաթափման նպատակով.

3) ունենան կլոր կամ ուղղանկյունաձև տեսք՝ 0.4-ից մինչև 1.1 խորանարդ մետր տարողությամբ, բայց ընդհանուր քաշը (աղբի հետ միասին)՝ ոչ ավելի, քան 700 կիլոգրամ (նկատի ունենալով, որ աղբատար մեքենայի մանիպուլյատորի առավելագույնը բեռնաբարձման քաշը 700 կիլոգրամ է).

4) ունենան դրանց մեջ կուտակվող թափոնների համապատասխան ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններ՝ դրանց բացասական ներգործությունից մարդու առողջությունը ու շրջակա միջավայրը պահպանելու համար.

5) ունենան համապատասխան գույն (մեկը մյուսից առանձնացնող), որը հնարավորություն կտա աղբահանության ծառայությունից օգտվող անձանց աղբը տեսակավորված հավաքելու համապատասխան աղբամանների մեջ:

10. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շինություններից ոչ պակաս, քան 10 մետր և ոչ ավելի, քան 100 մետր հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրից ոչ պակաս, քան 50 մետր հեռավորության վրա: Աղբամաններն ունենում են կափարիչներ և աղբով լցվում են 7/8-ից ոչ ավելի մակարդակով:

11. Աղբանոթների տեղադրումը պարտադիր է ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, հանգստի գոտիներում և այլն:

12. Փողոցներում աղբանոթների միջև ապահովվում է ոչ ավելի, քան 70 մետր հեռավորություն: Պուրակներում, զբոսայգիներում աղբանոթների քանակությունը որոշվում է 800 քառակուսի մետր մակերեսին 1 աղբանոթի հաշվարկով: Գլխավոր զբոսուղիներում աղբանոթների միջև հեռավորությունը կազմում է 40 մետրից ոչ ավելի:

13. Աղբի համար նախատեսված վայրում օգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր, կամ այլ վտանգավոր թափոններ (որոնք սահմանված են «Թափոնների մասին» օրենքում, ինչպես նաև իրենց բնակարանում կամ բնակելի տանը օգտագործված այնպիսի իրեր, առարկաներ, նյութեր կամ այլ թափոններ տեղադրելու դեպքում, երբ համապատասխան բժշկական ծառայությունների կոմից հայտնաբերվել են վարակիչ հիվանդություններ կամ այլ համաճարակային ինֆեկցիաներ),

տեղադրող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, մասնավորապես Համայնքի բնակիչները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հանրորեն ընդունված սանիտարական և հակահամաճարակային կանոնների համաձայն, պարտավորվում են մաքուր պահելու համայնքի ցանկացած հանրային տարածքը՝ փողոցները, մայթերը, պուրակները, այլ հանրային տարածքներ, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող տարածքները, առանց համապատասխան թույլտվությունների չայրել աղբը (պլաստիկ նյութերը և առարկաները, այդ թվում՝ պոլիէթիլենային տոպրակները և շէրը, ներկանյութերը և յուղերը, ռետինե և կաշվե իրերը և նյութերը, այլ վտանգավոր թափոնները), որպեսզի դրանք պատճառ չհանդիսանան հանրային տարածքներում աղբի՝ չնախատեսված վայրում թափման, կուտակման և պահման համար:

15. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ըստ անհրաժեշտության, Կազմակերպությանը տեղեկացնում են, տվյալ տարածքի աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ աղբամանների թվաքանակի մասին:

16. Շինարարական և/կամ խոշոր եզրաչափի աղբի առաջացման դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են Կազմակերպությանը ծանուցել աղբի հեռացման միանգամյա ծառայություն մատուցելու անհրաժեշտության մասին:

17. Համայնքի ղեկավարը իր կարգադրությամբ նշանակում է աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատու անձ, որը արձագանքում է ստացված հաղորդումներին, բողոքներին, նամակներին, վերահսկողություն է իրականացնում մատուցվող ծառայության ընթացքի, որակի, շրջակա միջավայրի պահպանման սահմանված նորմերի, սանմաքրման սխեմաների, աշխատանքային գրաֆիկի պահպանման նկատմամբ:

18. Խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են այդ մասին տեղեկացնել Կազմակերպությանը:

19. Կազմակերպությունը ծառայության մատուցման ընթացքում պարտավոր է շտկել սույն կարգի 18-րդ կետում նշված խախտումները 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանք դուրս չեն գալիս կնքված պայմանագրի շրջանակներից:

20. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) մաքուր վիճակում պահել տեղադրված աղբամանները, աղբամուղ խողովակների բունկերները և աղբատար մեքենաները, պարբերաբար իրականացնելով դրանց ախտահանումը՝ համապատասխան ախտահանող և մաքրող նյութերով:

2) սարքին վիճակում պահել աղբամանները, շահագործման համար ոչ պիտանիները փոխարինել նորերով:

3) աղբարկղերից և աղբամուղ խողովակի բունկերներից աղբի հեռացումից հետո ապահովել դրանցից 3 մետր շառավղով շրջակայքի մաքրությունը: Մաքրությունը սույն կարգի իմաստով շրջակայքի այն վիճակն է, երբ աղբի տեղափոխումից անմիջապես հետո աղբարկղերի և աղբամուղ խողովակի բունկերների 3 մետր շառավղով շրջակա տարածքը ամբողջությամբ մաքուր է:

4) հեռացնել ավելուց գոյացած աղբը և ապահովել ավլած տարածքի մաքրությունը:

5) իրականացնել աղբի հավաքումն ու փոխադրումը համապատասխան բեռնատար մեքենաներով՝ սահմանված ժամկետներին համապատասխան՝ աղբարկղերի տեղադրման վայրից մինչև աղբավայր:

6) սեզոնային, տոնական օրերի կամ այլ փոփոխությունների հետևանքով աղբի ավելացման դեպքում լրացուցիչ աղբարկղեր տեղադրել 10 աշխատանքային օրվա ընթացքում կամ ավելացնել աղբահանության հաճախականությունը.

7) թափոնների հավաքումն ու փոխադրումն իրականացնել բազմաբնակարանային շենքերի համար առնվազն 3 օրը մեկ անգամ, անհատական բնակելի/առանձնատների համար առնվազն 2 օրը մեկ անգամ՝ ժամը 06:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ սահմանված աշխատանքային գրաֆիկին համապատասխան, իսկ շրջիկ աղբատար մեքենաների դեպքում՝ ոչ պակաս, քան օրը մեկ անգամ՝ ժամը 8:30-ից 19:30-ը՝ սահմանված աշխատանքային գրաֆիկին համապատասխան:

21. Կազմակերպությունների և առևտրի օբյեկտների աղբահանությունն իրականացվում է Համայնքի բնակելի թաղամասերում իրականացվող աղբահանության հետ զուգահեռ:

22. Սահմանված ժամանակացույցին և տեղերին համապատասխան իրականացվում է Համայնքի փողոցների մաքրում՝ ավլելու և ջրով լվանալու միջոցով: Փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ժամերն են ոչ շուտ քան 06:00-ն և ոչ ուշ քան 16:00-ն:

23. Համայնքի բնակիչները և իրավաբանական անձանց աշխատակիցները պարտավոր են՝

1) աղբը աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ լցնել սահմանված ձևով.

2) աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ չլցնել վտանգավոր թափոններ, շինարարական, մեծածավալ/մեծամասշտաբ աղբ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգավոր են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար և պահանջում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ միջոցներ.

3) չտեղափոխել, չտեղահանել կամ չջրջել աղբամանները.

4) թափոնները լցնել միայն աղբամանների կամ շրջիկ աղբատար մեքենաների մեջ.

5) խոշոր եզրաչափի աղբի գոյացման դեպքում պատվիրել նշված աղբի՝ համապատասխան կոնտեյներով փոխադրումը.

6) սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:

24. Շինարարական աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում է անմիջապես աղբ գոյացնողից՝ առանց աղբամաններում կուտակելու կամ պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած կամ Համայնքի կամ օպերատորի կամ օրենքով նախատեսված անձանց տրամադրած և դրանց համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում: Ընդ որում, Համայնքը կամ օպերատորը աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար վճարողների պահանջով կարող է տրամադրել վարձակալության հիմունքներով:

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ

1. Համայնքում աղբահանության վճար վճարողներ են Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:
2. Համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և գրանցումը, աղբահանության դիմաց վճարների հաշվարկումը, վճարների գանձումն ու դրանք համայնքի բյուջեի համապատասխան հաշվի համարին մուտքագրումը կազմակերպում է Կազմակերպությունը:
3. Կազմակերպությունը վարում է էլեկտրոնային հաշվառման մատյաններ՝
 - 1) ֆիզիկական անձանց համար, որտեղ գրանցվում են անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և/կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի տվյալները, որոնք հավաստվում են անձը հաստատող փաստաթղթով, բնակչության պետական ռեգիստրի տրամադրած տեղեկանքով, համատիրությունների և թաղային լիազորների տրամադրած տեղեկանքներով: Այդ մատյաններում գրանցվում են նաև ըստ հասցեի բնակելի նշանակության անշարժ գույքի տվյալները՝ սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթի (վկայականի) հիման վրա.
 - 2) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, որտեղ տվյալները գրանցվում են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տրամադրած վկայականի և անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության (օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթի (վկայականի) հիման վրա.
 - 3) աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի հաշվառման համար:
4. Աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների հիման վրա Կազմակերպությունը նրանց հետ կնքում է պայմանագրեր (պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն կարգին կից ներկայացված Ձև N 1-ի և Ձև N 2-ի): Պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարվում են աղբահանության վճարների դրույքաչափերի, աղբահանության պայմանների, աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների փոփոխման դեպքում: Աղբահանության վճարի զեղչի արտոնությունից օգտվողների հետ կնքվում է լրացուցիչ համաձայնագիր, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մասը:
5. Աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի մեկ օրինակը պահվում է Կազմակերպությունում, որին կցվում են հաշվառման համար ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև աղբահանության վճարի զեղչի արտոնություն տվող փաստաթղթերի պատճենները:

6. Յուրաքանչյուր տարվա հունվար ամսին Կազմակերպության համապատասխան աշխատակիցների կողմից ստուգվում են աղբահանության վճար վճարողների էլեկտրոնային հաշվառման մատյաններում գրանցված տվյալների համապատասխանությունը առկա վիճակին և կատարված աշխատանքների արդյունքների մասին՝ մինչև փետրվարի 5-ը, Կազմակերպության ղեկավարին ներկայացվում է հաշվետվություններ:

Հաշվետվությունների հիման վրա հաշվառման մատյաններում կատարվում են փոփոխված տվյալների համապատասխան գրանցումներ, որոնք հիմք են հանդիսանում աղբահանության վճար վճարողների հետ նոր պայմանագրի կնքման կամ կնքված պայմանագրերում փոփոխություններ և/կամ/ լրացումներ կատարելու համար:

7. Աղբահանության վճար վճարողները՝ իրենց հաշվառման տվյալների փոփոխության (հաշվառված կամ բնակվող անձանց թվի փոփոխություն, աղբահանության վճարի զեղչի արտոնության իրավունքի ձեռք բերում կամ կորուստ և այլն) դեպքում պարտավոր են փոփոխության կատարման օրվանից 15-օրյա ժամկետում հայտնել Կազմակերպությանը՝ կնքված պայմանագրերում համապատասխան փոփոխություն կատարելու համար:

8. Աղբահանության վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում կնքված պայմանագիրը:

9. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:

10. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի օրենքով սահմանված կարգով՝ մինչև հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

11. Աղբահանության վճարի վճարումը սույն կարգով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0,075 տոկոսի չափով, դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար: Նախատեսված տույժերը հաշվարկվում և հաշվառվում (գանձվում) են աղբահանության վճարի վճարման ժամկետին հաջորդող ամսվա 1-ից:

ԿԱՐԳ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱՋԱՓԻ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի ղեկավարի կողմից թույլտվության տրամադրման պայմանները:
2. Շինարարական աղբը քաղաքաշինական գործունեության ընթացքում առաջացող, շինարարական վերանորոգման, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացող թափոններն են:
3. Խոշոր եզրաչափերի աղբը մարդու կենսագործունեության հետևանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող արտադրության և սպառման թափոններ են, որոնք, հաշվի առնելով դրանց ֆիզիկական հատկությունները (ներառյալ՝ չափը, ծավալը կամ քաշը), անհնար է հավաքել, պահել կամ փոխադրել կենցաղային աղբի համար նախատեսված տեխնիկական միջոցներով:
4. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնող անձինք, որոնք ցանկանում են սեփական միջոցներով փոխադրել և տեղադրել նշված աղբը, գրավոր դիմում են Արուսյան համայնքի ղեկավարին՝ թույլտվություն ստանալու համար:
5. Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունները տրամադրվում են կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ վճարովի հիմունքներով:
6. Դիմումում պետք է նշվի աղբի տեսակը, գտնվելու վայրը, ծավալը կամ զանգվածը, աղբի հավաքման և փոխադրման նախատեսվող ժամկետները և այլ անհրաժեշտ տվյալներ:
7. Դիմողը պետք է ներկայացնի հավաստի տվյալներ այն մասին, որ տիրապետում է այդ աշխատանքների կատարման համար բավարար նյութատեխնիկական միջոցների:
8. Դիմումը համայնքապետարանում մուտքագրվելուց հետո 3-օրյա ժամկետում Կազմակերպության ղեկավարը Համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում որոշման նախագիծը և շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը (թույլտվության օրինակելի ձևը՝ համաձայն սույն կարգին կից ներկայացված Ձև-3-ի):
9. Թույլտվությամբ սահմանվում են՝
 - 1) իրավաբանական կամ ֆիզիկական անձի տվյալները (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հասցեն)։
 - 2) աղբի ծավալը, գտնվելու և տեղադրման վայրերը, տեղափոխման երթուղին։
 - 3) աշխատանքների կատարման ժամկետները։
 - 4) աղբի տվյալ տեսակի հավաքման և փոխադրմանը ներկայացվող պայմաններ։
10. Համայնքի ղեկավարի կողմից հաստատված թույլտվությունը դիմողին տրամադրվում է վճարման անդորրագիրը ներկայացնելուց հետո:
11. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանությունը թույլտվություն ստացած անձինք իրականացնում են այն պայմանով, որ՝

